

**ԱՂՁՆԻԶԱՅԱՅԵՐԻ ԱՆԱՍՆԱՊԱՅԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՐՈՇ ՁԵԿԵՐ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅՑՆԵՐ**

Ռ. Ա. ՆԱՅԱՊԵՏՅԱՆ

Աղձնիքում հայ բնակչությունը հազարամյակների ընթացքում կիրառել է անասնապահական աշխատանքի կազմակերպման զանազան ձևեր, սովորույթներ ու ծեսեր, որոնց ազգագրական ուսումնասիրությունը ունի տնտեսական, պատմամշակութային կարևոր նշանակություն, քանզի հնարավոր է դառնում հազարամյակների ընթացքում մշակված արտադրական հմտությունների որոշ մասի կիրառումը նաև մեր օրերում: Դրանց ուսումնասիրման շնորհիվ բացահայտվում են վաղեմի հասարակական կազմակերպությունների շատ մնացուկներ:

Արևելահայոց տնտեսական կյանքում XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբների անասնապահության ձևերի վերաբերյալ պատմաազգագրական համակողմանի ուսումնասիրություն է կատարել ազգագրագետ Յու. Սկրտումյանը¹: Մինչդեռ արևմտահայերի անասնապահական տնտեսության բազմաբնույթ ձևերը առ այսօր մնում են չուսումնասիրված:

Պատմական Աղձնիքի տարածքում, Հայկական Տավրոսի հարավային լեռնաճյուղերի ալպիական մարգագետինները և տափաստանային հարթավայրերը նպաստավոր էին արոտային անասնապահության, հատկապես խաշնարածության զարգացման համար: Հնագիտական, պատմական և ազգագրական բազմաթիվ տվյալներ վկայում են, որ անասնապահությունն այստեղ եղել է հայ բնակչության հնագույն զբաղմունքներից մեկը: Հատկանշական է, որ այստեղ միշտ էլ կարևորվել է խոշոր եղջերավոր անասունների բուծումը. եզր և գոմեշը երկրագործության մեջ հիմնական լծկան ուժն էին, որոնց նկատմամբ մեծ խնամք ու հոգատարություն էր ցուցաբերվում: Դեռ Ասորեստանի թագավոր Ասարխադդնի արձանագրություններից մեկում խոսվում է Շուպրիա (Մասուն) երկրի խոշոր եղջերավոր անասունների նախիրների, ոչխարի հոտերի և դրանց խնամող հովիվների մասին: Իսկ ուրարտական արձանագրություններում հաճախ ուղղակի և անուղղակի հիշատակվում է «Ալզի» երկրի՝ մանր և խոշոր եղջերավոր անասուններով հարուստ լինելու մասին²:

Հնագույն ժամանակներից սկսած՝ Աղձնիքում կազմավորվել է անասնապահության նստակյաց եղանակ, ձմռանը՝ մսուրային, ամռանը՝ արոտավայրային խնամմամբ: Հայ բնակչության նստակյացությունը պայմանավորված էր ոչ միայն տեղի բնակլիմայական պայմաններով, այլև երկրագործական, անասնապահական համալիր տնտեսության վարմամբ: Մինչդեռ Աղձնիքի մեղմ կլիմայով

¹ Տե՛ս **Յու. Մկրտչյան**, *Формы скотоводства в Восточной Армении.* - «Հայ ազգագրություն և բանահյուսություն», Եր., 1974, հ. 6, էջ 3-97, Վ. **Թեմուրճյան**, *Անասնապահությունը Հայաստանում, ձեռագիր (անավարտ)*, պահվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում:

² Տե՛ս **Ն. Բ. Янковская**, *Некоторые вопросы экономики Ассирийской державы*, «Вестник древней истории», 1951, № 1, էջ 38, **И. М. Дьяконов**, *Ассиро-вавилонские источники по истории Урарту*, «Вестник древней истории», 1951, № 2-4, № 23, 26, 67:

հովտային շրջաններում վաչկատուն կյանք վարող քրդերը իրենց անասուններով կտրում էին երկար տարածություններ, ամռանը բարձրանում Տավրոքիկի և Սասնա լեռնային մարգագետիններով հարուստ արոտավայրերը, այդտեղից էլ ուշ աշնանը իջնում ձմեռանոցները՝ շուրջ տարին վրանաբնակ կյանք վարելով ամբողջ ընտանիքով, դաշտավարությունից կտրված: Նրանց հիմնական տնտեսածևը խաշնարածությունն էր: Նստակյաց կյանք վարող երկրագործ հայ բնակչությունը կողոպտվում էր ոչ միայն պետական պաշտոնյաների ու քոչվոր ավագանու չարաշահումներից, այլև խաշնարածությամբ զբաղվող քրդական և այլ ցեղերի տեղաշարժերից: Ամեն տարի կրկնվող այդ տեղափոխությունների ընթացքում ոտնատակ էին արվում հայ երկրագործների քյտիներով մշակված ցանքատարածությունները, քոչվորների ճանապարհին ընկած բնակավայրերը մշտապես ենթարկվում էին սպառազեն այդ ցեղերի հարձակմանը: Թուրքական կառավարությունը իրավունք էր վերապահել քոչվորներին իրենց հոտերով շարժվել ցանկացած ուղղությամբ:

Աղձնիքի լեռնային և նախալեռնային շրջաններում, առանձնապես Սասունում, դաժան բնակլիմայական պայմանների, ձմռան երկարատևության և այդ ընթացքում արոտների բացակայության պատճառով անասունները մսուրային խնամքի էին ենթարկվում շուրջ հինգ-վեց, նույնիսկ յոթ ամիս, որից հետո բարձրանում էին արոտավայրերը: Լեռնային և նախալեռնային շրջաններում ամառանոց-արոտավայր գնալիս անվտանգության ապահովման նպատակով համայնքի անդամ ընտանիքներով քարավան էին կազմում միասնական և միաժամանակյա կարգով: Դա հայտնի էր սար (Սասունում՝ **գոզան** կամ **խղանի**, Խութում՝ **շաշեր**) գնալ անվանմամբ, ինչը արդի ազգագրական գրականության մեջ համարվում է հեռագնա անասնապահություն³:

Լեռնային արոտավայրերը բաժանվում էին երեք գոտիների՝ ա) համայնքային, որը տվյալ գյուղի սեփականությունն էր՝ սահմանագծված այլ գյուղերի փոխադարձ համաձայնությամբ, բ) բոլորովին ազատ արոտավայրեր, որոնք ոչ թե մեկ գյուղի, այլ ընդհանուր շրջանի սեփականությունն էին, գ) արգելված գոտիներ: Յուրաքանչյուր գյուղ ուներ իր համայնքային վարելահողային, արոտավայրային և անտառային սահմանները՝ **սինոռը**: Միջհամայնքային տարածքային վեճեր առաջանալու դեպքում նոր **թափու**՝ վարձակալություն էին ձևակերպում գյուղի նկատմամբ և պաշտոնապես վավերացնում՝ **կոչան** անում:

Արոտավայրերը և անտառները գյուղի համար ընդհանուր էին, թեև անտառամասից անասնակեր տերև և դալար ճյուղեր կտրելու համար անտառամասը բաժանում էին ըստ տնտեսությունների: Սասունում այդ անտառամասը կոչվում էր **սաթառ**, իսկ Բռնաշենում՝ **հադոն**, այլ տեղերում՝ **դախլ**: Այստեղ 4-5 տարին մեկ երիտասարդացնելու նպատակով ծառերը կտրում էին և տերևները՝ **թավը**, որպես անասնակեր գործածում: Ընտանիքների բաժանքի դեպքում սաթառն էլ էր ենթարկվում վերաբաժանման: Եթե ազգի սաթառները իրար մոտ էին, տարբերություն չէր դրվում: Սահման՝ **թխում** էր ծառայում ձորը, առուն, աղբյուրը, ժայռը, բնական նշանով վայրերը, սրբազան ծառերը և այլն: Իսկ տերևը կտրելուց հետո անտառը այլևս ոչ ոքի չէր պատկանում, և աշնանն էլ անասունները այստեղ արածեցնում էին հավասարապես:

Երկրորդ կարգի արոտավայրեր էին համարվում բնակավայրից հեռու գտնվող անմարդաբնակ սարալանջերը, որոնք ևս ունեին իրենց սահմանները, բայց ոչ գյուղական, այլ շրջանային սեփականության պայմաններով, որտեղ կարող էին արածել շրջակա գյուղերի անասունները:

³ Տե՛ս Ю. Мкртыян, նշվ. աշխ., էջ 45-64:

Մայիս ամսվա կեսերին, երբ սկսվում էր գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջափուլը՝ վարուցանքը, ընտանիքի մի մասը լծու եզների հետ մնում էր գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքներով զբաղվելու, իսկ անասնապահները անասուններով բարձրանում էին ամառային արոտավայր (սար)։ Ամեն գյուղ ուներ իր մշտական օբատեղերը և արոտավայրերը։

Արոտ բարձրանալիս, մի քանի տնտեսություն միանալով, կազմում էին **օբա**։ Մեծ գյուղից դուրս էր գալիս մինչև 10-15 օբա, որոնցից յուրաքանչյուրը կազմվում էր 10-12 տնտեսությունից։ Մինչև ամառանոց հասնելը անասուններին տանում էին գյուղամերձ հողանդակները՝ 2-3 շաբաթ տևողությամբ մակադելով արտատեղերը պարարտացնելու՝ ուժելու նպատակով։ Իսկ արտերը բավականին հեռու էին գյուղերից, որովհետև շրջակա ամենափոքրիկ հողակտորն էլ ենթակա էր մշակման։ Ամառանոցում մնում էին մինչև աշուն (սեպտեմբերի կեսերը)՝ բերքահավաքը և կախոցը։ Անասունն աշնանն աստիճանաբար իջեցնում էին գյուղի մերձակա անտառները, որտեղ սարվորները մասնակցում էին թավի կտրման և հավաքման խմբային աշխատանքին։

Ամառանոցներում անասնապահությունից բացի զբաղվում էին նաև մեղվաբուծությամբ, բրդի մշակությամբ, ոստայնագործությամբ։ Բնակլիմայական, տնտեսական ու անվտանգ ապրելու համար բարենպաստ պայմանների առկայության դեպքում բացառված չէր ամառանոցների վերածվելը բնակավայրերի։

Ամառանոցներում յուրաքանչյուր ընտանիք ունենում էր իր կացարանը։ Կացարանի այն տեսակը, որ կազմվում էր մազե գործվածքից, կոչվում էր վրան՝ **կոն**։ Իսկ մյուսը, որ պատրաստվում էր ծառի ճյուղերից և հյուսվում կողովի ձևով, հայտնի էր որպես **խուղ** (հյուղ)։ Վերջինս ծածկվում էր տերևավոր ճյուղերով կաթիլքը և ցուրտը կանխելու նպատակով, որը նախնադարյան բնակարանի տիպ էր հիշեցնում։ Կոնի և խուղի ներսում չթե միջոտումներով ստեղծում էին ննջարան-կացարան, որ կոչվում էր **գոնտակ** կամ **մարդկենց**, և կաթնամթերքների մառան, որը հայտնի էր **կուլին** անունով։ Կացարանները կառուցվում էին սար բարձրացող ազգակից ընտանիքների տղամարդկանց միասնական ջանքերով, հերթով։ Յուրաքանչյուր կացարանի կառուցման ավարտից անմիջապես հետո օջախի վրա **կողերով** կավե կճուճներով, **ջաջառուն** (յուղով ու այլուրով եփված հալվա) էին հյուրասիրում։ Յուրաքանչյուր տնից սար էին բարձրանում հովիվները՝ կաթնամշակ կանանց՝ **բերվորների**, նրանց օգնական պատանիների ու աղջիկների՝ **բշկորիների** և մանկահասակ երեխաների հետ։ Ամառանոց գնալիս միշտ տեղից տեղ էին փոխադրվում և ամեն տեղում նոր **խուղեր** կառուցում արոտը լավացնելու նպատակով։ Մայիսի սկզբից մինչև օգոստոսի սկիզբը մնում էին սարում, իսկ այդ ընթացքում 3 անգամ տեղից տեղ էին փոխադրվում։ Վերջին օբաները հիմնվում էին գրեթե լեռան գագաթին, որտեղից էլ իջնում էին սաթառները, ուր մնում էին շուրջ մեկ ամիս։ Յուրաքանչյուր ջուլ իջնում էր իր սաթառները։ Այս ժամանակահատվածը համընկնում էր անասնակեր տերև և մատղաշ շիվեր կտրելու խմբային աշխատանքի հետ, որին միանում էին անասնապահները, բերվորները, իսկ կանայք կազմակերպում էին ճոխ հյուրասիրություն։ Տուն էին հասնում նոյեմբերի կեսերին։ Քրդական ավարառությունների հաճախակիության պատճառով օբաները համախմբված կուռ բնակավայրի էին վերածվում, իսկ խուղերի դռնակները բացվում էին հյրապարակի վրա։ Այսպիսով, հայերի անասնապահության ձևը լեռնային շրջաններում, հիմնական բնակավայրերից բացի, պահանջում էր սարի ժամանակավոր բնակավայրերի գոյություն, ուր ապրում էր բնակչության մի մասը մայիս-հոկտեմբեր ամիսներին։

Հովտային շրջաններում տաք բնակլիմայական պայմանների շնորհիվ հոտերն արոտավայրերում պահում էին կտր տարին։ Հովիվների ընտրության և

վարձատրման, հոտի մեծության և կազմելու կարգն ամենուրեք վճռում էին գյուղապետերն (ռես) ու գյուղի ավագանին: Ըստ այդմ՝ հովիվները հարգված անձնավորություններ էին գյուղերում, նրանց նույնիսկ հատկացվում էր տուն ու տեղ, եթե չունեին: Հովտային շրջաններում համայնքը ամեն օր 2 զինված տղամարդ էր հատկացնում՝ հովիվների և հոտի անվտանգությունը ապահովելու, քրդերի ավաբառությունը կանխելու համար⁴:

Մեր գրառած դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրության հիման վրա Աղձնիքի անասնապահական ընկերակցությունները նպատակահարմար է դասակարգել հետևյալ տեսակների.

1. Ազգակից ընտանիքների միավորում խաշնարածության գծով, որն իր հերթին ենթադրում էր հետևյալ ենթատեսակները.

- գերդաստանական, անհատական,

- տարբեր կարողությամբ ազգակից ընտանիքներից կազմված ընկերակցություն,

- հավասար կարողությամբ, բայց ոչ ունևոր ազգակից ընտանիքներից կազմված ընկերակցություն:

2. Տարբեր կարողությամբ ազգականների և հարևանների ընկերակցություն:

3. Հավասար կարողությամբ հարևաններից կազմված ընկերակցություն:

Աղձնիքում անասնապահական աշխատանքի կազմակերպման ձևերը այժմ էին ընկնում ուրույն գծերով, նախկինից ժառանգած տարրերով և յուրահատկություններով:

Ազգակից ընտանիքների միավորում խաշնարածության գծով

Հեռագնա անասնապահության կազմակերպումը պահանջում էր մեծ թվով մարդկանց հավաքական ջանքեր: Այդ պատճառով էլ անասնապահության այդ ձևի կիրառումը անցյալում հնարավոր էր առավելապես գերդաստանների մասնակցությամբ: Ոչխարի մեծ հոտ ունեցողները դառնում էին օբաների ղեկավարներ: Հովիվ էին դառնում օբաների ղեկավար ընտանիքների անասնապահությամբ զբաղվող անդամները, երբեմն էլ իբրև օգնականներ վարձվում էին հովիվներ: Վերջիններս բնամթերային կամ մանր եղջերավոր անասունների վարձատրությամբ պահում էին նաև օբայի մյուս անդամների ոչխարները⁵: Երբեմն էլ հովիվներ էին դառնում ազգականները: Հավասար գլխաքանակի դեպքում ոչխարատերերը հիշյալ ընկերությունը կազմելիս հովիվ էին դառնում հերթով, ուստի բացառվում էր նրանցից որևէ մեկի գերիշխող դիրքը: Այսպես, Գելիեզուզան գյուղում գերդաստանական տները սար էին բարձրանում 1 ջուլ (ավելի քան 1000 ոչխար) և ավելի ոչխարով: Տնտեսություն կար, որ արոտ էր հանում 400-500 ոչխար: Խզրո Գորքեի տունը սար էր տանում 1 ջուլ ոչխար, 1 ջուլ այծ ու ջալաբ (մսացու ոչխար), մշտապես 2 հովիվ հսկում էր հոտը: Նույն ազգից Մարտիրոսի Առաքելի (Ըոքո) տունը արոտ էր հանում 1 ջուլ ոչխար, 1 ջուլ գառ⁶: Ազգը մաքիների, գառների և այծերի առանձին ջուլեր էր կազմում՝ առանձին հովիվներով:

Գերդաստանների սակավացման պատճառով հատկապես խաշնարած տնտեսությունները փոքրանում էին, որն էլ առաջ էր բերում արհեստական տնտեսական-

⁴ Տե՛ս ԴԱՆ, տ. 4, էջ 153, տ. 6, էջ 59, տ. 7, էջ 255, տ. 12, էջ 95-99, տ. 13, էջ 255, նաև՝ Ռ. Նահապետյան, Աղձնիք (պատմաազգագրական ակնարկ), «Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա, Եր., 1974, էջ 169-170:

⁵ Տե՛ս Ռ. Նահապետյան, նշվ. աշխ., էջ 170:

⁶ Տե՛ս ԴԱՆ, տ. 7, էջ 260:

արտադրական միությունների կամ անասնապահական ընկերակցությունների ստեղծման անհրաժեշտություն: Դրանք XIX դարի սկզբներին դրսևորվում էին մանր եղջերավոր անասունների արածեցման ընկերակցությունների կազմակերպմամբ, որտեղ անդամների փոխհարաբերություններն ազգակցական կամ հարևանական փոխօգնության ձևով էին: Ի դեպ, ինչպես Սասունում, այնպես էլ լեռնային և նախալեռնային մյուս շրջաններում ազգակցական սկզբունքը ավելի ակնհայտ է դրսևորվել արոտավայրերի օգտագործման և անասունների արածեցումը համատեղ կազմակերպելու եղանակի մեջ:

Սասունում պահպանվում էր 5-10, երբեմն էլ ավելի ազգակից ընտանիքների համատեղ ամառանոց գնալու սովորությունը: Յուրաքանչյուր գյուղ ուներ իր օբստեղերը, իսկ յուրաքանչյուր ազգատոհմ՝ իր առանձին օբստերը կամ խղվմին: Խաշնարածությամբ պարապող տնտեսության անդամների մեծ մասը որակյալ և փորձառու հովիվներ էին, երեխաները՝ գառնարած, ուլարած, հորթարած, իսկ պատանիները՝ հովիվների օգնականներ: Գյուղում վարուցանքի աշխատանքների ավարտից հետո լծկան անասունները ուղարկվում էին ամառանոց և մինչև բերքահավաքն ու կախոցը մնում էին սարերում առանց հոտաղի հսկողության: Երբեմն էլ քրդական ավազակների ավարառությունը կանխելու նպատակով անասունները իրար էին կապում: Մազից կամ բրդից հյուսած երկար պարանի վրա օղփակ էին անում՝ 1,5 մ հեռավորության վրա օղակներ ստեղծելով: Օղփակն անցկացվում էր յուրաքանչյուր անասունի առաջին ոտքը և ձգվում: Այսպես պարանի երկայնքով անասունները շարվում էին: Անասուններին տեղում պահելու համար պարանի կենտրոնում **սըկտա** (ցից) էր խրվում գետնի մեջ:

Ըստ սովորության՝ գերդաստանական ունևոր ընտանիքները մի-մի ոչխար էին քողում սարում: Դա **հազարաթողի** սովորության էր: Հազարաթողի ոչխարը եթե տուն վերադառնար, այդ տարի անկում չէր լինի: Սասնա Հրոք գյուղում արու այծը՝ **թաքանը**, և խոյը առանձին էին արածեցվում՝ բեղմնավորումը կարգավորելու, ոչխարի ծինը գարնանը ապահովելու և կորուստ չունենալու նպատակով: Այստեղ հոկտեմբեր ամսին սարից իջնելիս ընտանիքները թաքանների գլխներին փաթաթում էին մետաքսե շորեր, ներկում նրանց և երգ ու պարով մատաղ անում՝ այդ տարվա հաջողությունը (ղովյութը) ապահովելու նպատակով: Դա կատարվում էր հինգշաբթի օրը⁷:

Խաշնարածությամբ զբաղվող յուրաքանչյուր գերդաստան ուներ իր տոհմական, գերդաստանական սեփականությունը հաստատող նշանը, որ խարանում էին կենդանու ճակատին: Գերդաստանի բաժանքով տոհմական նշանը անցնում էր ավագ եղբորը, իսկ դուստր մյուս ընտանիքների նոր նշանը որոշվում էր ընտանիքների ավագների կողմից: Ուշագրավ է, որ Սասնա գյուղերում պատրաստված կաթնամթերքները պահածոյացվում և հորվում էին առուների, աղբյուրների հոսող ջրերի ափերին, խոնավ տեղերում, կավե կճուճներով: Համայնքը հորում էր միատեղ, շարքով և միմյանցից տարբերելու համար կաթնամթերքով՝ **թացանով**, կավե կճուճները (գրուրները) ևս ունենում էին իրենց տոհմական նշանները: Ամառանոցներում եթե մի ընտանիք կիթը շուտ էր ավարտում, օգնության էր հասնում ազգակից ընտանիքին: 2-3 և ավելի տներ միանում էին և այժի տիկերով հերթով կատարում մակարդը: Օրական 5-6 տիկ էին հարում (1 տիկը 25-30 լիտր է)⁸:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 233-234:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 253:

Ազգակից ընտանիքներից կազմված ընկերակցության գերդաստանական, անհատական ենթատեսակները հեռագնա անասնապահական ձևեր էին, որոնք XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին թեև հազվադեպ էին կիրառվում, սակայն, ըստ երևույթին, ավելի վաղ անցյալում շատ տարածված էին:

Աղձնիքի հովտային շրջաններում այդպիսի ընտանիքները վարձում էին հովիվ և վարձատրում կա՛ն բնամթերքով, կա՛ն հողագուրկ հովվի ընտանիքին հողամաս տրամադրելով⁹:

Տարբեր կարողությամբ ազգակից ընտանիքներից կազմված ընկերակցությունն այն էր, երբ ունևոր ընտանիքների հոտերին էին խառնում մաս ազգակից ընտանիքների սակավաթիվ ոչխարները: Այս դեպքում ոչխարի մեծ հոտ ունեցողները դառնում էին օբաների ղեկավարներ: Ընդ որում, հովվությունը գլխավորում էին ունևոր ընտանիքները՝ հիմնականում անվարձ և երբեմն բնամթերային, բացառիկ դեպքերում մաս դրամական վարձակալման սկզբունքներով: Ազգատոհմի սակավաթիվ անասուններ ունեցող անդամները սար չէին բարձրանում. նրանց անասունները սար տանելու և կաթնամթերքները մշակելու համար վարձ չէր վերցվում: Բայց վերջիններս ինչպես բարոյական, այնպես էլ սովորության տեսակետից պարտավորվում էին նշյալ աշխատանքի դիմաց փոխհատուցել գյուղատնտեսական այլ աշխատանքներով՝ երբեմն էլ ընկնելով տնտեսական կախման մեջ: Այսպես՝ Մասունի Հիթինք գյուղում ունևոր գերդաստանները կազմում էին ընկերակցություն քիչ թվով ոչխարներ ունեցող իրենց ազգական ընտանիքների հետ, իսկ հովվությունը ստանձնում էր ջուլատերը: Ազգական ընտանիքները պարտավորվում էին օգնել իրար մաս երկրագործական աշխատանքների ժամանակ¹⁰:

Հեռագնա խաշնարածության զարգացումը արոտավայրերում պահանջում էր մեծ թվով մարդկանց մասնակցություն և ամբողջովին համապատասխանում էր գերդաստանում աշխատանքի կազմակերպման բնույթին: Գերդաստանների տրոհման հետևանքով ոչխարաբուծական տնտեսությունը փոքրանում էր, ինչն էլ առաջացնում էր տնտեսական հավասար կարողությամբ արհեստական ընկերակցությունների ստեղծման անհրաժեշտություն: Նման պայմաններում ազգատոհմի ընտանիքների հոտերը մնում էին ընդհանուր հսկողության ներքո: Որքան անբարենպաստ էր աշխարհագրական և էթնիկական միջավայրը, այնքան անհուսալի էին դառնում սննդի և գոյատևման աղբյուրները, նույնքան անհրաժեշտ էր դառնում համայնքի, առավել ևս ազգատոհմի ընտանիքների փոխօգնության կազմակերպումը: Առանց դրա հնարավոր չէր արդյունավետորեն դիմակայել բնության տարերքներին և ավարառու ցեղերի հարձակումներին:

Ընկերակցությունների այս ենթատեսակներից բացի, Մասունի, Մոտկանի, Տավորիկի, Խարզանի գյուղերում մինչև XIX դարի վերջերը և XX դարի սկզբները ավելի տարածված էր *հավասար կարողությամբ ազգակից ընտանիքների միավորումը* մեկ ընկերակցության մեջ, որի դեպքում նրանք հովիվ չէին վարձում, այլ հոտն արածեցնում էին **դորով**՝ հերթով: Հերթը կախված էր յուրաքանչյուր ընտանիքի ոչխարների քանակից, իսկ գոմաղբը հավասար բաժանվում էր և ազգի տղամարդկանց ընդհանուր ուժերով տեղափոխվում ընտանիքների արտերը՝ դրանք պարարտացնելու նպատակով: Ազգականներից կազմվող ընկերակցության անդամները ունեին հավասար իրավունքներ և պարտականություններ, իսկ ղեկավար դերը ստանձնում էր ազգի առավել գործիմաց և հեղինակավոր անդամը:

⁹ Գալիոկ գյուղում ռես Տերտերի Հազեն արոտ էր հանում մի առանձին ջուլ, որի արածեցման համար հովիվ Ավետիսը որպես վարձ ստանում էր իր ընտրությամբ 1,5 քիլա՝ 150 կգ ցորենի սերմատեղ հողամաս և նույնքան էլ սերմացու (տե՛ս ԴԱՆ, տ. 12, էջ 97-98):

¹⁰ Տե՛ս ԴԱՆ, տ. 12, էջ 12:

Ուշագրավ է, որ Աշտարակի և Թալինի ենթաշրջանների սասունցիներով բնակեցված գյուղերում մույն սովորությամբ 1920-30-ական թթ. արոտ էին բարձրանում ըստ ազգակցական թաղերի կամ ըստ Սասունից գաղթած բնակավայրերի: Օրինակ՝ Լեռնարոտ գյուղում հովվական երկու ընկերակցություն էր կազմվել, մեկը՝ հիթինքցիների թաղը, մյուսը՝ Խզող տները՝ յուրաքանչյուրը 7-10 տուն: Հովիվ են վարձել քրդերի: Որպես վարձ 20 ոչխարի դիմաց տալիս էին 1 գառ, մեկ ձեռք հագուստ՝ շավար, թումբան, շապիկ, գուլպա, տրեխ, 10 ոչխարի դիմաց՝ 1 օրվա հաց և 1ռ. դրամ՝ հագուստ գնելու համար: Մննդով էին ապահովում նաև նախարապանին՝ 1 տավարի դիմաց 1 օրվա սնունդ: Ի տարբերություն քուրդ հովիվների՝ հայ հովիվը որպես վարձ վերցնում էր 20 ոչխարի դիմաց՝ 2 փութ ցորեն, յուրաքանչյուր 1 տավարի դիմաց՝ 4կգ ցորեն, իսկ 1930-ական թթ՝ 7 կգ ցորեն, նույնքան՝ 1 ձիու դիմաց¹¹: Խարզանի շրջանի գյուղերում յուրաքանչյուր ազգակցական թաղ ուներ իր առանձին հոտը: Այստեղ, ինչպես Մոտկանի, Սասունի և մյուս շրջանների շատ գյուղերի արոտավայրերում, արածեցնում էին հերթով. ազգակից բոլոր ընտանիքները սովորության և բարոյական նորմերով պարտավոր էին կանոնավոր մասնակցել հերթին: Հիշյալ սովորությունը մինչև օրս պահպանվում է Թալինի և Աշտարակի սասունցիաբնակ գյուղերում¹²: Թեև այս սովորությունը պահպանվում էր նաև Արևմտյան Հայաստանի այլ շրջաններում, բայց Սասունում և հարակից շրջաններում բաշխման սկզբունքները համահավասարության տեսակետից ավելի հնավանդ էին¹³: Ի տարբերություն վաչկատուն անասնապահ քրդերի՝ Արևմտյան Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջանների հայ բնակչության տնտեսության առաջատար մյուս բնագավառը երկրագործությունն էր, ինչն ինքնին ենթադրում էր նաև զարգացած անասնապահություն: Այդ մասին է վկայում այն, թե հայ բնակչությունը որքան է կարևորել արտերում մանր կծղակավորների հոտերի մակադեցումը, ինչպես նաև ոչխարի գոմաղբով պարարտացումը:

Ընկերակցության այս ենթատեսակը տարածված էր նաև լեռնային այն շրջաններում, որտեղ նախիրը և հոտերը հարուստ բուսականության առկայության պատճառով սար չէին ուղարկվում, այլ տարին բոլոր արածեցվում էին գյուղերի շրջակայքում:

Այսօրինակ ընկերակցության առաջացումը հիմնականում պայմանավորված էր գերդաստանների բաժանքով, երբ դրանից հետո առանձին դուստր ընտանիքների տնտեսական ընդհանրությունը դրսևորվում էր նաև անասունների արածեցմանը ազգակից ընտանիքների հավասար ու ըստ հերթի մասնակցության սկզբունքներում:

Մեր ձեռքի տակ եղած դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընկերակցությունը, որպես կանոն, ազգակից ընտանիքներից էր կազմվում այն շրջաններում, որտեղ բնակչությունը անասունները տեղափոխում էր սեզոնային արոտավայրեր: Դա հիմնականում վերաբերում է լեռնային և նախալեռնային այն շրջաններին, որտեղ ավելի կայուն էին պահպանվել գերդաստանական, ազգակցական հարաբերությունները: Հեռագնա աշխատատար բազմագործառույթ անասնապահական ձևը օբյեկտիվորեն նպաստում էր գերդաստանների պահպանմանը: Այն բնույթով և սկզբունքներով ավելի վաղ

¹¹ Տե՛ս ԴԱՆ, տ. 7, էջ 256-258:

¹² Տե՛ս ԴԱՆ, տ. 6, էջ 55-56, 59, տ. 4, էջ 153-154:

¹³ Դերսիմում արտերը պարարտացվում էին հիմնականում ոչխարները մակադեցնելով: «Այն գյուղերը, - նշում է Գ. Հալաջյանը, - որոնք առանձին հոտեր չունեին, նույն ձևով (մակադեցնելով - Ռ. Ն.) հերթական կարգով օգտվում էին ընդհանուր հոտից, իրենց ունեցած ոչխարների թվի հաշվով տեղաբաշխելով այն» (Գ. Հալաջյան, Դերսիմի հայերի ազգագրությունը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պրակ 5, Եր., 1973, էջ 104):

շրջանի ծնունդ էր, քան ընկերակցության մյուս տեսակները: Իհարկե, Արևմտյան Հայաստանի լեռնային այս շրջաններում շահագործումը երբեմն վարագործվում էր ավանդական փոխօգնությամբ, բայց ապրանքադրամական հարաբերությունների թույլ զարգացածության պատճառով չէր հասել բացահայտ շահագործման աստիճանի, ինչպես Արևելյան Հայաստանում¹⁴:

Տարբեր կարողությամբ ազգականների և հարևանների ընկերակցություն

Ազգակցական սկզբունքով կազմվող ընկերակցությանը զուգընթաց գործում էր ընկերակցության մեկ այլ ենթատեսակ, երբ համայնքի մնացած տնտեսությունները միավորում էին իրենց մանր կնդակավոր անասունները հարևանական սկզբունքներով: Ընկերակցության այս ձևը ներառում էր տարբեր կարողությամբ ազգականների և հարևանների: Մեծ գյուղերում կազմակերպվում էին ինչպես մեծաթիվ, այնպես էլ փոքրաթիվ (2-4 ընտանիք) ազգակցական և հարևան ընտանիքներից կազմված ընկերակցություններ: Այս դեպքում արածեցնում էին կան հերթով, կան վարձում հովիվ: Բուն Սասունի Սառըկանք գյուղից ոչ շատ հեռու գտնվող արոտավայրերն էին գնում հունիսի կեսերին, երբ ավարտվում էին երկրագործական վարուցանքի աշխատանքները և վերադառնում էին սեպտեմբերի կեսերին՝ բերքահավաքին ու կալսոցին մասնակցելու համար:

Այստեղ, ինչպես Սասունի ու լեռնային մյուս շրջանների գյուղերում, ունեւոր տնտեսությունները արոտ էին հանում 400-500 ոչխար, ինչպես նաև մեծ թվով գառներ և այծեր, հովիվ չէին վարձում, իսկ մնացած տնտեսությունները, որոնք տարբեր կարողությամբ ազգականներ և հարևաններ էին, ստեղծում էին առանձին ընկերակցություն և վարձում հովիվ¹⁵: Սասունի Շատախի շրջանում 20 ոչխարի դիմաց տրվում էր 1 գառ, յուրաքանչյուր տնից՝ 1 զույգ տրեխ, հարուստ ոչխարատերերը տալիս էին նաև 1-ական այծենակած, **շապիկ, թումբան, արբա և բուններ** (զուլպաներ): Հովիվը 100 ոչխար պահելու համար ստանում էր 10 օրվա սնունդ: Ոչխարատերերից շատերը հովիվներին շներ էին տալիս, որոնք պետք է կերակրվեին տերերի ոչխարների կաթով: Հովիվն օգտվում էր յուրաքանչյուր տան 1 ոչխարի կաթից: Եթե գառնարածն էլ վարձված էր լինում, ապա 30 ոչխարի դիմաց ստանում էր 1 գառ: Բռնաշենում հովիվին 3 ոչխարի խնամքի դիմաց տալիս էին 1 չափ կորեկ (1 չափը 14 կգ է), 3 **փառու** (շապիկ, վարտիք, արբա), մի զույգ բուն և տրեխ: Ոչխարատերերը պարտավոր էին հովիվին ապահովել սննդով:

Աղձնիքի լեռնային և նախալեռնային շրջանների փոքր գյուղերում, երբ տնտեսությունների թիվը չէր անցնում 15-20-ից, ամառանոց էին բարձրանում ամբողջ գյուղով՝ միասնաբար համայնքի անդամների անվտանգությունն ու ինքնապաշտպանությունը կազմակերպելու և նրանց միջև փոխօգնությունն ապահովելու նպատակով: Ընդ որում, ամառանոցում բնակավայրի նմանությամբ պահպանվում էին ազգակցական տների շարքերը: Տարվորիկի թաղերը համարվող Մզրա և Արտխոնք գյուղերի տնտեսությունները ամառանոց էին գնում մայիսի վերջերին և շուրջ երեք ամիս մնալուց հետո վերադառնում էին՝ բերքահավաքին մասնակցելու: Ամառանոցներում ամբողջ համայնքի մանր անասունները արածեցնում էին հերթով՝ ըստ տների և անասունների գլխաքանակի: Համայնքային փոխօգնությունը դրսևորվում էր առանձնապես կացարանների կառուցման, կաթնամթերքների պատրաստման, օտար հարձակումների դեմ միմյանց գորավիզ լինելու ժամանակ¹⁶:

¹⁴ Տե՛ս **Ю. Мкртымян**, նշվ. աշխ., էջ 69:

¹⁵ Տե՛ս ԴԱՆ, տ. 12, էջ 28-29:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 24-25:

Կարողությամբ հավասար հարևաններից կազմված ընկերակցություն

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին տարածքային սկզբունքներով ստեղծվում էին մեծ մասնա հարևաններից կազմված ընկերակցություններ. դա տարածված էր հիմնականում հովտային շրջաններում, ուր հայ բնակչությունը վարում էր բացառապես մստակյաց երկրագործական տնտեսած:

Աղձնիքի հովտային շրջաններում (Խարզանի, Սիվանի, Բշերիկի) տաք բնակլիմայական պայմանների շնորհիվ ոչխարի հոտերը արոտավայրեր էին ուղարկվում կլոր տարին: Այս շրջաններում խախտվել էր ազգականներով ըստ թաղերի ապրելու սովորույթը, և ազգակցական թաղերը վերածվել էին հարևանական կցաթաղերի: Ուստի այս շրջաններում ընկերակցությունները ևս կազմվում էին ըստ թաղերի: Գալիոկ, Մլքիշան, Ջվոյս, Ջման, Բրա, Հզնամիր, Շքաստակ, Ղուբին և այլ գյուղերում տավարը խնամելու համար վարձվում էր մեկ տավարած, իսկ ոչխարի համար՝ մի քանի հովիվ: Այնտեղից շրջանի Շքաստակ գյուղում տավարը մերձակա արոտ էր հանվում մայիս ամսին և մինչև դեկտեմբեր, մինչև ձյուն տեղալը, գիշեր-ցերեկ արոտավայրում պահվում, իսկ դեկտեմբերից մինչև ապրիլ ամիսը վարձված նախրապանը (գավան) ցերեկներն արածեցնում, երեկոյան գյուղ էր իջեցնում: Մինչդեռ ոչխարը շուրջ տարին էին արոտավայրում պահում՝ վարձելով 2 հովիվ (շվան): Հովիվին իբրև վարձ 1 ոչխարի դիմաց տալիս էին 3 կոտ (1 կոտը՝ 8 կգ) հացահատիկ՝ 2 կոտ ցորեն և 1 կոտ գարի, գարի չլինելու դեպքում՝ սպիտակ կորեկ, իսկ նախրապանին՝ 1 անասունի դիմաց 1 կոտ ցորեն և 1 կոտ գարի, բերքառատ տարին՝ 2 կոտ ցորեն, 1 կոտ գարի: Մլքիշան և Բրա գյուղերում նախրապանին վարձում էին 2 սեզոնի համար էլ: Այս դեպքում նոյեմբերից մինչև ապրիլի վերջը նախրապանին իբրև վարձ տալիս էին՝ 1 տավարի համար 2 օրը 1 հաց, 2 և ավելի տավարի համար՝ օրը 1 հաց, իսկ մայիսից մինչև հոկտեմբերի վերջը իբրև վարձ տալիս էին 2 կոտ ցորեն¹⁷: Ամբողջ տարվա համար հովիվը ստանում էր 1 չափ ցորեն, 10 մետր կտավ համայնքի կողմից, 1 նուգի (800 գրամ) բուրդ՝ 1 շալի (անդրավարտիքի) և գուլպաների համար, իսկ շատ ոչխարատերերը մեկ 1 թիկնոց¹⁸: Հզնամիր գյուղում 3 ոչխարի խնամքի դիմաց տալիս էին 1 ալբ ցորեն, տունը՝ օրական 1 հաց, իսկ նախրապանին՝ 1 անասունի համար 1 ալբ ցորեն, հագուստը և սնունդը նախրապանի հաշվին էր: Գալիոկ գյուղում կլոր տարին ոչխարը արոտ էր հանվում, մարտ-ապրիլ-մայիս ամիսներին գիշերները պահում էին արտերում՝ մակաղեցնելու համար, իսկ ցերեկները հանում էին արոտավայրերը: Այստեղ նախրապանը ևս վարձվում էր ամբողջ տարվա համար, ընդ որում, կթու խոշոր անասունները ոչխարի հոտերի հետ խոտի դալար ժամանակ գիշեր-ցերեկ պահվում էին գյուղամերձ արոտավայրում: Առանձին նախիր էր կազմվում մեկ հորթերից ու ավանակներից: Ոչխարը գյուղ չէր բերվում շուրջ տարին, մնում էր արոտում՝ գիշեր-ցերեկ: Բերվորները՝ կթվորները, գնում էին կթելու, կաթը ջորիների կամ էշերի վրա տիկերով բարձած վերադառնում էին գյուղ:

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսից մինչև XX դարի սկզբները դաշտավայրային, մստակյաց երկրագործական շրջաններում անասնապահական ընկերակցությունները կազմավորվում էին ըստ տարածքային և ունեցվածքային հատկանիշների, իսկ այն շրջաններում, որտեղ հարատևում էին գերդաստանական և ազգակցական հարաբերությունները, ընկերակցությունները կազմվում էին ազգականներից:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 95-96:

¹⁸ Տե՛ս ԴԱՆ, տ. 9, էջ 113:

Ինչպես երևում է վերը շարադրվածից, հարևանական փոխօգնության՝ բովանդակությամբ ավելի նախնական ձևը ազգակցականն էր, որը լիովին համապատասխանում էր ամբողջ տոհմի շահերին: Այս մասին Ս. Եղիազարովը «Գյուղական համայնք» աշխատության մեջ գրում է. «Հնում ընկերակցության մեջ էին ընդգրկվում մեծ մասամբ ազգակից ընտանիքները, որով ընկերակցությունը ձեռք էր բերում ընտանեկան-ազգակցական համայնքի բնույթ»¹⁹:

Ամփոփելով ասեմք, որ Աղձնիքում դարեր շարունակ անասնապահական տնտեսություն վարելու ընթացքում կիրառվել էին անասուններին խնամելու ավանդական հմտություններ և ուշագրավ սովորույթներ ու ծեսեր: Հնագույն ժամանակներից սկսած՝ այստեղ կազմավորվել է անասնապահության մտակցաց եղանակ, ձմռանը՝ մսուրային, ամռանը՝ ընտանիքի մի մասի հետ բնակավայրից մինչև 20-25 կմ և ավելի հեռավորությամբ արոտավայրային խնամմամբ:

Անասնապահական տարեկան շրջափուլում նկատելի էր եռաստիճանականություն. ա) բնակավայրին մոտակա հերկած արտերը պարարտացնում էին ոչխարի գոմադրով՝ մակաղեցնելու եղանակով, բ) հետո 5-6 ամսով բարձրանում էին արոտավայրերը, գ) օգոստոսի կեսերից մինչև սեպտեմբերի կեսերը սկսվում էր վերադարձը. բնակավայր իջնելիս կրկին մակաղեցնում էին արտերը և անցնում ձմեռային մսուրային խնամքի:

Պատմական Աղձնիքը արևմտահայերի այն ավանդապահ տարածքն էր, որտեղ դեռևս կայուն էին պահպանվել ազգակցական հարաբերությունները, առկա էին ընտանիքների միջև գաղափարական, տնտեսական և տարածքային միասնության տարրեր, փոխօգնության հարաբերություններ:

Р. А. НААПЕТЯН — Некоторые формы и способы организации скотоводческих сообществ у армян Ахдзника. — В статье описываются вековые традиционные формы ведения оседлого скотоводческого хозяйства в Ахдзнике. Обращается внимание, в частности, на следующую особенность: поскольку армянские села часто подвергались грабительским набегам курдов, то выпас скота в Ахдзнике проводился всегда группами вооруженных пастухов, с применением форм сотрудничества и взаимопомощи семейств общины.

¹⁹ С. А. Егiazаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1, Сельская община, Казань, 1889, с. 62: